ՍՈՒՍԱՆՆԱ ՊՈՂՈՍՅԱՆ

ԿԱՊԵՐՈՎ ՉԵՎԱՎՈՐՎԱԾ ԲԱՌԱԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՏԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Խոսքի դրսևորման երկու ձևերը՝ գրավոր և բանավոր, տարբերվում են նրանով, որ բանավոր խոսքը գրավորի նկատմամբ առավելություններ ունի. հնչերանգի, դիմային շարժումների, նպատակային դադարների և այլևայլ արտաքին երևույթների միջոցով խոսողը ճշտորեն արտահայտում է իր ցանկացածը և փորձում խոսքը դարձնել դիպուկ, նպատակասլաց և ի վերջո հասնել ցանկալի ազդեցության: Գրավոր խոսքը չունի վերը նշված արտահայտչամիջոցները: Այն արտահայտիչ, պատկերավոր ու հասկանալի դարձնելու, ունկնդիրների վրա ցանկալի ներգործություն ունենալու, նաև կանոնակարգելու համար խոսքի նվազագույն միավորը՝ նախադասությունը, կետադրում ենք: Բանավոր խոսքում նկատվող դադարները գրավոր խոսքում արտահայտվում են տրոհության նշաններով:

Ուշադրություն դարձնենք *կապ* խոսքի մասով ձևավորված կառույցներին և նրանց կետադրությանը: Եթե խոսքի նվազագույն միավորը նախադասությունն է, ապա նախադասության նվազագույն միավորը բառակապակցությունն է, այսինքն՝ խոսել կապային կառույցների մասին նշանակում է ուսումնասիրել կապային բառակապակցությունները: Բառակապակցությունը ո՛չ բառ է, ո՛չ էլ նախադասություն, բառից տարբերվում է նրանով, որ իր կազմում ունի մեկից ավելի բառեր, նախադասություն չէ, քանի որ չունի ստորոգում:

Շատ լեզվաբաններ բառակապակցությունը համարում են երկու և ավելի նյութական իմաստ ունեցող բառերի քերականական կապակցություն, այս դեպքում կապերով, ձայնարկություններով կազմված բառակապակցությունները բառակապակցություն չեն համարվում: Սակայն բառակապակցությունների բնույթը որոշվում է գերադաս անդամի խոսքիմաստային պատկանելությամբ, և եթե բառակապակցության գերադաս անդամը կապ է, այդպիսի բառակապակցությունը կհամարվի կապային բառակապակցություն: Օրինակ՝ ծառի վրա, ծառի տակ, ծառի մոտ, մարդու համար, ընդդեմ մարդու, արևի պես, մինչև լույս, դեպի դպրոց և այլն:

Բառակապակցությունները նախադասության մեջ կատարում են շարահյուսական մեկ պաշտոն: Կապային բառակապակցությունները նախադասության մեջ գործածվում են տարբեր շարահյուսական պաշտոններով և ըստ այդմ էլ տրոհվում են կամ չեն տրոհվում: Ինչպես գիտենք, կապերը սպասարկու բառեր են, արտահայտում են ստորադասական հարաբերու-

թյուններ. այս խոսքի մասը ինքնին նախադասության անդամ չի դառնում, այլ միանում է որևէ բառի հետ և նրա հետ միասին դառնում նախադասության մեկ անդամ: Կապերը միշտ գործածվում են գոյականների կամ իբրև գոյական առնված այլ խոսքի մասերի հետ՝ ցույց տալով նրանց խնդրային կամ պարագայական պաշտոնը նախադասության մեջ:

Իրենց խնդրի հետ միասին կապերը դառնում են նախադասության մեկ անդամ և լրացնում են ստորոգյալին: Հետևաբար, կապով արտահայտված լրացումները հիմնականում խնդիրներն ու պարագաներն են: Սակայն գոյականական անդամի լրացումները նույնպես կարող են ձևավորվել կապերով և որոշակի դիրքերում կետադրվել: Բերենք կապով ձևավորված հետադաս որոշիչի դեպքեր.

Օրինակ՝ Շիկնած դեմքով ուղեկցուհիս ծովի պես աշխույժ, ագահությամբ նայում էր ծովին (Հայոց լեզվի հարցաշարերի շտեմարան «Զանգակ»1992թ, 2003թ., բնագիր 207[1]): Երևի այն երկրում էլ պարզկա գիշեր է աչքերի նման վառվող փայլփլուն աստղերով (Շտեմարան, բնագիր 44):

Երկվորյակ եղբայրները ածուխի պես սևորակ մազերով ու ընչացքով, հարբածությունից գլուխները կորցրած, սկսեցին պարել (Շտեմարան ,բնագիր 31): Ահա փոքրիկ լիճը՝ ալիքների բեկբեկուն արփիափայլով, աչքի պես վճիտ (Շտեմարան, բնագիր 25): Հիշում եմ Աղթամարի հնօրյա վանքը՝ կղզու վրա թառած (Շտեմարան, բնագիր 22):

Ընդմիջարկված հատկացուցիչը նույնպես կարող է ձևավորվել կապային բառակապակցությամբ՝

Օրինակ՝ Միայն անհողմ ծփանքը դանդաղ սահում է ծովի հալված պողպատի պես փայլող մակերեսով (Շտեմարան ,բնագիր 207) :

Այդ խորհրդավոր լռության մեջ լսվում էր միայն ծղրիդի՝ քաղցած մանկան լացի պես ճռինչը (Շտեմարան, բնագիր 94) :

Արևի սկավառակը կախվել էր Օլիմպոսի վրա և լուսավորում էր նրա դարերի համար կառուցված վեհապանծ տաճարներն ու հուշարձանները: (Շտեմարան, բնագիր13): Եփեսոսի բնակիչները հպարտանում էին Արտեմիսի դարերի համար կառուցված տաճարով (Շտեմարան բնագիր 57):

Թեև հարուստ էր, բայց համեստ կյանքով էր ապրում իր փափկակյաց կյանքի համար նախասահմանված սրահներում (Շտեմարան, բնագիր 60) :

Կապերով կարող է ձևավորվել մասնական բացահայտիչը, որը բուն բացահայտիչից տարբերվում է և՛ ձևով, և՛ շարադասությամբ, և՛ իմաստով, այն ձևավորվում է *որպես, իբրև, ինչպես, հանձինս, ի դեմս* կապերով, այս դեպքում բացահայտիչը և բացահայտյալը իրարից տրոհվում են բութով, իսկ նախադասության մյուս անդամներից ստորակետով, եթե բացահայտիչին չի հաջորդում օժանդակ բայ, որևէ կապ կամ *էլ* բառը: Մասնական բացահայտիչը

բացահայտյալի հետ կարող է համաձայնել կամ կարող է չհամաձայնել դեմքով, հոլովով, իսկ շարադասությունը կայուն չէ:

Օրինակ՝ Որպես Թորգոմա սերնդի շառավիղ ես եղել եմ բուռն, կրքոտ, դյուրագրգիռ (Շտ., բնագիր 183): Այն որպես կապտավուն հայելի, դրված է լեռնային գոգավորության մեջ (Շտ., բնագիր 179): Ահա տարագույն ծաղիկների ու թփերի մեջ երևում է նա՝ իբրև ծիածանագույն մի փասիան (Շտ. բնագիր 201): Իբրև կրքված իշխան նա զուսպ էր և խոհեմ (Շտ., բնագիր 200): Դեռ ավտոբուս չնստած՝ հիշեցի, որ Գեղարդի ճանապարհին Ողջաբերդի մոտ է Չարենցի կամարը (Շտ., բնագիր 16) :

Կապերով ձևավորվում են նաև մասնավորեցնող տեղի և ժամանակի պարագաները, որոնք նույնպես տրոհում են պահանջում, այս պարագաները նաև անվանում են տեղի և ժամանակի մասնավորող բացահայտիչ՝

Օրինակ՝ Խորեն աղայի տունը՝ հենց աղբյուրի գիխին էր մրգաստու ծառերով այգու մեջ (Շտ., բնագիր 195): Ներքևում փրփրադեզ լճի ափերի մոտ, երևում էին Չիբուխլու գյուղի խրճիթները (Շտ., բնագիր 180): Գիրք խթանելով երիվարներին՝ շարժվեցին առաջ դեպի գյուղ (Շտ., բնագիր 110): Մխիթարը կարգադրեց ճեպընթաց սուրհանդակ ուղարկել Տաթև՝ Բայանդուր իշխանի մոտ (Շտ., բնագիր 39): Վաղը՝ երեկոյան կողմ, հայկական եկեղեցում պատարագ կա (Շտ., բնագիր 106): Ամեն անգամ գրասեղանի մոտ նստելիս, Բեթհովենը քննախույզ մի ակնարկ էր գցում նկարի վրա (Շտ., բնագիր 100): Վրանի մոտ փոքրիկ խարույկի շուրջ, նստած էին զինվորները (Շտ., բնագիր 80): Քիչ այն կողմ գետի վրա, շղարշի պես կախվել էր մի նոսր մշուշ՝ որպես թեթև ու թափանցիկ ծուխ (Շտ., բնագիր 69): Գարնանը՝ հեղեղների ժամանակ, գետակը վարարում է և իր մեջ առնելով մեծ ու փոքր քարեր՝ առաջ է մղում իր աղմկահույզ ալիքները, շառաչում կիրճով մեկ (Շտ., բնագիր 11):

Բացահայտման կապերը երբեմն՝ կարող են դրսևորել շաղկապին հատուկ շարահյուսական կիրառություն և կետադրվել: Այստեղ արդեն դրսևորվում է *կապ* խոսքի մասի առանձնահատկություններից մեկը՝ շաղկապին հատուկ շարահյուսական պաշտոնով հանդես գալը:

«Բառերի տեսակների բաժանումը ըստ խոսքի մասերի, հիմնված է նրանց գործածության եղանակի վրա, ուրեմն հենց որ գործածության եղանակը փոխվեց, փոխվում է նաև բառի տեսակը: Ամեն մի բառ, որ ի բնե համարվում է այսինչ տեսակի, կարող է հեշտությամբ անցնել մի ուրիշի, սրա համար բավական է, որ նա ընդունի թեքական այն ձևը, որ այդ մյուսը ունենում է»,-գրում է Հ.Աճառյանը իր «Լիակատար քերականություն հայոց լեզվի» 3-րդ հատորում [2]:

Այսինքն՝ խոսքի մասերի թափանցումը միմյանց մեջ և նրանց հատուկ շարահյուսական պաշտոնով գործածվելը հանգեցնում է, որ նշված կապերով ձևավորվում են պարագաներ, սակայն ինչպես արդեն համոզ-

վեցինք. նրանք ձևավորում են նաև գոյականական անդամի լրացումներ, իսկ երբեմն էլ արտահայտում են առանձին հոլովածների իմաստ: Խոսքի մասերի թափանցումը միմյանց մեջ մեզ երբեք էլ առիթ չպետք է տա պնդելու, որ շարահյուսական նոր որակ դրսևորած խոսքի մասը վերածվել է այլ խոսքի մասի, այլ միայն այն, որ տվյալ բառը կարող է դրսևորել նաև լրացուցիչ շարահյուսական հատկանիշ՝ իրեն ոչ հատուկ: Որովհետև, հակառակ պարագայում, խոսքի մասերի դասակարգման մեջ շփոթ կառաջանա: Այն բառը պետք է համարվի *կապ*, որը նախադասության մեջ դրսևորում է միայն *կապ* խոսքի մասին հատուկ շարահյուսական դեր, ցանկացած դեպքում գործածվում է իբրև այդպիսին և չունի նյութական իմաստ: Անցած բոլոր դեպքերում պետք է համարել, որ գործ ունենք այդ պահին կապային հատկանիշ դրսևորած այլ խոսքի մասի հետ, որը միայն ժամանակավորապես է իրեն այդպես դրսևորել և ցանկացած այլ դեպքում կարող է հանդես գալ կապին ոչ հատուկ շարահյուսական պաշտոնով: Բերենք կապերի շաղկապական կիրառության դեպքեր .

Օրինակ՝ Ասեն ավելի ուժեղ է, քան երազանքը:

Նախքան մերոնք կանցնեին գետը, թշնամին անցավ հարձակման:

Փոխանակ ուշադիր լսես, խանգարում ես ուրիշներին:

Մինչ սպասում էինք հյուրերին,մանր անձրև սկսվեց:

Թեքվել էր, ինչպես ուռին է թեքվում ջրերի վրա:

Նա եղբորն ավելի է սիրում, քան քրոջը:

Չնայած գարունը բացվել էր, բայց դեռ ցուրտ էր:

Երբ բացահայտման կապերով ձևավորվում է ձևի պարագա և այն անմիջապես նախորդում է բայ-ստորոգյալին, չի տրոհվում: Ընդհանրապես ձևի պարագա՝ կապով ձևավորված, չի տրոհվում, եթե իր կազմում չունի դերբայ: Օրինակ՝ Նա երգում էր ինչպես սոխակ:

Տղան խոսում էր իբրև գործից տեղյակ մարդ:

Սակայն երբ մասնական բացահայտիչը լրացնում է բայական անդամին և բայի ու մասնական բացահայտչի միջև կա գոյականով դրված անդամ, գործում է տրոհության նույն կանոնը, ինչ մասնական բացահայտիչի դեպքում: Օրինակ՝ Ամեն հայ մտնում է Մատենադարան որպես սրբատեղի, և խոսում ակնածանքով ու շշուկով (Շտեմարան, բնագիր 82):

Մասնական բացահայտիչը, լինելով գոյականական անդամի լրացում, երբեմն կապի շնորհիվ ունենում է պարագայական երանգ և կապվում բայի հետ: Բացահայտման կապերով երբեմն կարող են ձևավորվել նաև տրոհվող և չտրոհվող ձևի և հիմունքի պարագաներ:

Օրինակ՝ Նա որպես հմուտ հոգեբան, գիտեր ինչպես ոգևորեր բանակին (Շտեմարան, բնագիր 73):

Հաճախ շարադասությունն է որոշում լրացման բնույթը և ըստ դրա էլ՝ կետադրությունը: Օրինակ՝ Նա գիտեր որպես հմուտ հոգեբան՝ ինչպես ոգևորեր բանակի՝ մարտերում կոփված ոգին:

Եվ հնչում է որպես աղոթք արքայական քո լեզուն: (Վ. Տերյան)

Մասնական բացահայտիչի և ձևի պարագայի միջև կա իմաստային և քերականական տարբերություն. ձևի պարագան բայական անդամի լրացում է, բացահայտիչը գոյականական, դրանով էլ պայմանավորված է նրանց կետադրությունը: Շփոթությունից խուսափելու համար կարելի է դիմել փոխակերպման. մասնական բացահայտիչը բուն բացահայտիչի վերածել՝ այս ձևով ճշտելով արդյոք դառնում է գոյականի լրացում, թե ոչ: Օրինակ՝ Նա հմուտ հոգեբանը, գիտեր... Նա գիտեր հմուտ հոգեբանի նման, պես...

Միշտ չէ, որ այս միջոցը արդյունավետ է և կիրառելի, քանի որ այս կապերով դրվում է նաև ստորոգելական վերադիրը, չնայած այն կարող է նաև առանց կապի հանդես գալ:

Կապերով ձևավորվում են խնդիրներ: Խնդիրները սովորաբար չեն տրոհվում, սակայն չեն բացառվում շարադասության պատճառով նաև խնդիրների տրոհման դեպքեր:

Ինչպես ասվեց, տեղը և ժամանակը մասնավորող պարագաները, որոնք ձևավորվում են համապատասխան կապերով, տրոհում են պահանջում:

Տեղը մատնանշող կապերն են՝ *մեջ, վրա, մոտ, տակ, ի վար, ի վեր, ներքև, ներքո, միջև, հանդեպ, դիմաց, դեպի* և այլն:

Ժամանակը մատնանշող կապերն են՝ *մինչև, ցմահ, օրոք, օրով, հետո, անց, նախքան, միջոցին, պահին, առաջ, առ, ժամանակ* և այլն:

Այս կապերով ձևավորված պարագաները հիմնականում չեն տրոհվում, չնայած կան դեպքեր, երբ հետադաս դիրքում ժամանակի պարագան տրոհվում է: Օրինակ՝ Այդպես վայելք էր ապրում նակարիչը հերթական գլուխգործոցի բարձր գնահատականը ստանալուց հետո:

Կապերով կարող են ձևավորվել նաև դերբայական դարձվածները, որոնք երբեմն տրոհվում են, երբեմն ոչ: Չեն կետադրվում *առաջ, հետո, մոտ, դեպքում, ժամանակ, մասին, պատճառով, պես, համար* կապերով ձևավորված դերբայական դարձվածները:

Օրինակ՝ Ափին հասնելուն պես զինվորները սկսեցին նետահարել արաբներին (Սուրացան «Գևորգ Մարզպետունի»):

Հիվանդ լինելու դեպքում էլ նա չէր բացակայում:

Անձրևը գալու պատճառով հանդիպումը չկայացավ:

Ընթրելու ժամանակ սկսեց իր անցյալից պատմել:

Ձանգը հնչելուց հետո երեխաները մտան դասարան:

Դերբայական դարձվածով արտահայտված ծավալուն վերջադաս պարագաները երբեմն տրոհվում են նաև լրացյալին կապով միանալու

դեպքում: Օրինակ՝ Ուժեղ ցնցում էր պետք՝ ինձ այդ անտարբերությունից հանելու համար (Նար -Դոս «Ես և Նա»):

Համար կապով ձևավորված նախադաս նպատակի պարագաները չեն տրոհվում, իսկ վերջադասները տրոհվում են բութով: Օրինակ՝ Դստերը աստվածների բարեհաճությանն ու հովանավորությանն արժանացնելու համար Երվանդ արքան նրան երկու տարի պահել էր Բագրևանդում:

Երվանդ արքան դստերը երկու տարի պահել էր Բագրևանդում՝ նրան աստվածների բարեհաճությանն ու հովանավորությանն արժանացնելու համար (Հ. Խաչատրյան «Երվանդ Սակավակյաց» էջ 27):

Ճիշտ կետադրելու համար պետք է համոզվել, որ նշված բառակապակցությունը նպատակի պարագա է, որովհետև երբեմն *համար* – ով ձևավորված այլ պարագաներ կարող են շփոթության տեղիք տալ: Դա կարելի է անել ստորոգյալից հետո *որպեսզի, որ* շաղկապները վերականգնելու և դերբայը դիմավոր բայ դարձնելու միջոցով: Օրինակ՝ Նա ջրի ակունքն էր գնում, (որպեսզի , որ) դաշտը ջրի (Ինչի՞ համար, ի՞նչ նպատակով):

Օրինակ՝ Չափազանց թանկ վճարեց հայոց այրուձին քուշան խուժանին հյուրընկալվելու համար (Շտեմարան, բնագիր 3):

Նպատակի պարագա երկրորդականով բարդ ստորադասական նախադասությունները փոխակերպելիս ստացվող բառակապակցությունները կազմվում են *համար , նպատակով* կապական բառերով: Օրինակ՝ Նա գնաց աղբյուր ջուր խմելու (համար , նպատակով): Կապերով կարող է ձևավորվել տրոհվող ձևի պարագա, եթե բառակապակցության մեջ առկա է դերբայը: Օր.՝ Առանց մի խոսք ասելու նստեց: Նրա կապույտ խոշոր աչքերը փայլում էին գարնան արևի պես: Կապերով կարող է ձևավորվել տրոհվող պատճառի պարագա: Օրինակ՝ Ծիրանենին ժամանակից շուտ ծաղկաթափվեց՝ Արարատյան դաշտում անակնկալ ցրտեր սկսվելու պատճառով:

Ըստ, համաձայն, հիմամբ, հիման վրա, նայած, չնայած կապերով ձևավորվում է հիմունքի պարագան, որը տրոհվում է դերբայական դարձվածի նման նախադաս և հետադաս դիրքում բութով, միջադաս դիրքում երկու կողմից ստորակետով: Օրինակ՝ Համաձայն տնօրենի որոշման՝ դասերը կսկսվեն ժամը ինֆին: Դասերը կսկսվեն ժամը ինֆին համաձայն տնօրենի որոշման: Դասերը, համաձայն տնօրենի որոշման, կսկսվեն ժամը ինֆին:

Բացառման և զիջման հարաբերություն արտահայտող կապերով և կապական բառերով ձևավորվում է բացառման կամ զիջման պարագան: Այս պարագաները ձևավորվում են *բացի, առանց, զատ, փոխանակ, հանդերձ, չնայած, չհաշված, հակառակ* կապերով և կապական բառերով: Այս պարագաները, կախված շարադասությունից, կետադրվում են դերբայական դարձվածի նման: Օրինակ՝ Առանց խոսելու նստեց: Նստեց առանց խոսելու: Նա, առանց խոսելու, նստեց:

Կետադրության նկատմամբ որոշակի առանձնահատկություններ է դրսևորում *առանց* նախադրությունը:

Առանց նշանակում է *չունենալ, չունի*. երբեմն էլ կարող է ունենալ *թող, բացի, չհաշված* նշանակություններ (Հր.Աճառյան-Արմատական բառարան, էջ 212): Միշտ ստանում է սեռական հոլովով խնդիր: Այս նախադրությամբ ձևավորված բառակապակցությունները *չունենալ* իմաստով գործածվելու դեպքում չեն կետադրվում,եթե բառակապակցության մեջ դերբայ չկա, իսկ *բացի, չհաշված* իմաստով գործածվելու դեպքում կետադրվում են դերբայական դարձվածի նման: Օրինակ՝ Մնաց առանց հացի: Ձեռքը մեկնեց ինձ առանց մի խոսք ասելու: Ձիջման պարագան չի տրոհվում, եթե ընկած է օժանդակ բայի, հանգույցի, *էլ* վերաբերականի հարևանությամբ: Օր. Ի հեճուկս քեզ էլ նա կանի այդ բանը:

Ձիջման պարագան շատ հաճախ կարելի է շփոթել նույն կապերով ձևավորված այլ պարագաների հետ, որը տրոհում չի պահանջում:

Օրինակ՝ Ամեն ինչ եղավ քո ասածին հակառակ:

Հաճախ տրոհվում են նաև դերբայական դարձվածով չարտահայտված և լրացյալին կապով միացած հիմունքի, զիջման, պարագաները, բացառման անուղղակի խնդիրը: Օրինակ՝ Այս ամենը, ըստ իս, ճիշտ է :

Բացի նամակներից տղան հոդվածներ էր գրում:

Այսպիսով, փորձեցինք որոշ չափով պարզեցում և համակարգում մտցնել կապային բառակապակցություններով ձևավորված շարահյուսական միավորների կետադրության մեջ: Սակայն պետք է ընդունել, որ կետադրությունը անձի անհատականության հետ կապ ունեցող երևույթ է, և այն վերջնականորեն համակարգելը այնքան էլ հեշտ չէ:

Օգտագործված գրականության և ծանոթագրությունների ցանկ

1.Օրինակների մասը մեջբերված է հայոց լեզվի 2003 թ. հարցաշարերի շտեմարանից.
2.Հ.Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, Երևան 1957, հատոր 3:Նույնի, Արմատական բառարան, էջ 212,հ.1:
3.Է. Աղայան, Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը, Երևան 1967, էջ 67:
4.Ա. Ղարիբյան, Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա , Երևան 1954, էջ 364:
5.Ա. Ս. Մարգարյան , Ժամանակակից հայոց լեզու, Երևան 1990, էջ 302:
6.Ս. Գ. Աբրահամյան, Ժամանակակից հայերենի քերականություն, Երևան 1975, էջ 189, նույնի, Չթեքվող խոսքի մասերը և նրանց բառական ու քերականական հատկանիշների փոխհարաբերությունները ժամանակակից հայերենում, Երևան 1965, էջ 340:
7.Մ. Ե. Սաստրյան, Ժամանակակից հայոց լեզու, Երևան 1989, էջ 362:
8.Վ. Ա. Քոսյան, Ժամանակակից հայերենի նախադասության վերլուծության հարցեր, Երևան 1976, էջ 62-186:
9.Հ. Լ. Զաքարյան , Կետադրական բառարան, Երևան 1998:
10.Ս Աբրահամյան , Հայերենի կետադրությունը, Երևան 2002:
11.Յու. Դավթյան, Կետադրական ինքնուսույց, Երևան 2000:
12.Ռ.Իշխանյան, Արդի հայերենի շարահյուսություն,Պարզ նախադասություն, Ե.1986, 38:
13.Գ. Լ. Գարեգինյան, Ժամանակակից հայոց լեզու, Երևան 1997, էջ 288: